

- *Տնտեսական աճը մայիսին գրեթե կրկնապատկվեց՝ ապրիլի համեմատ:*
- *Ջուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները մայիսին աճեցին 19.5 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված Ռուսաստանից ներհոսքերով:*
- *Գնաճը հունիսին մեղմացավ մինչև 3.9 տոկոս, իսկ ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողեց:*
- *Թե՛ ներմուծումը, թե՛ արտահանումը շարունակեցին նվազել (տ/տ), թեև ավելի դանդաղ:*
- *Առևտրային բանկերի ավանդների և վարկերի առողջ աճը մայիսին պահպանվեց:*
- *Բյուջեում մայիսին գրանցվեց ՀՆԱ-ի 0.8 տոկոսի պակասուրդ:*

Տնտեսական ակտիվության աճը մայիսին հասավ 10.4 տոկոսի (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ Բարձրանալով ապրիլի 5.4 տոկոսից (տ/տ՝) (պատկեր 1): Աճի՝ հունվար-մայիս ժամանակահատվածի աճողական ցուցանիշը բարձրացավ մինչև 5.7 տոկոս (տ/տ): Մայիսին աճի ավելի արագ տեմպը պայմանավորված էր շինարարության (մինչև 22.2 տոկոս, տ/տ) և ծառայությունների, առանց առևտրի, աճի ավելի բարձր տեմպերով (10.8 տոկոս աճ, տ/տ, մայիսին՝ համեմատած ապրիլի 5.6 տոկոսի հետ, տ/տ): Արդյունաբերության ծավալները շարունակեցին կրճատվել՝ նվազելով 5.9 տոկոսով (տ/տ), սակայն ապրիլից պակաս չափով՝ հանքարդյունաբերության ոլորտի աճի՝ մինչև 17.9 տոկոս (տ/տ) թափ հավաքելուն զուգահեռ: Մշակող արդյունաբերության աճը ևս շարունակվեց նվազելով 13.5 տոկոսով (տ/տ)՝ պայմանավորված ակոհոլային խմիչքների արտադրության 9 տոկոսով (տ/տ) նվազմամբ և գունավոր մետաղների արտադրության ծավալների շուրջ 70 տոկոսով կրճատմամբ (հաջորդելով 2024 թվականի թողարկման բացառիկ բարձր ծավալներին): Իրավաբանական անձանց ամսական գրանցումների թվաքանակը մայիսին շարունակեց նվազել (6.9 տոկոս, տ/տ)՝ պայմանավորված անհատ ձեռնարկատերերի գրանցման ցուցանիշի 7.6 տոկոսով (տ/տ) և ՍՊԸ-ների՝ 4.7 տոկոսով (տ/տ) նվազմամբ:

Մայիսին զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների բարձր աճը պահպանվեց

կազմելով 19.5 տոկոս (տ/տ): Ռուսաստանից զուտ ներհոսքերի տեմպի արագացմամբ (ընդլայնվելով 48.3 տոկոսով, տ/տ) էր պայմանավորված ընդհանուր աճի գրեթե մեկ հինգերորդը, իսկ Միացյալ Նահանգներից զուտ ներհոսքերը մի փոքր նվազեցին (պատկեր 2):

Հունիսին գնաճը մեղմացավ մինչև 3.9 տոկոս՝ նվազելով մայիսի 4.3 տոկոսից (պատկեր 3): Սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների (6.2 տոկոս) գնաճը շարունակեց մեծացնել գնային ճնշումները: Կրթության գնաճը ևս բարձր պահպանվեց (7.8 տոկոս): 2025 թ. հունիսի 17-ին ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) խորհուրդը վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույքն անփոփոխ՝ 6.75 տոկոս թողեց, եզրակացնելով, որ վերաֆինանսավորման ընթացիկ տոկոսադրույքը նպատակահարմար է միջնաժամկետ հատվածում գնաճն իր 3 տոկոսի թիրախին մոտ պահելու համար:

Մայիսին թե՛ արտահանումը, թե՛ ներմուծումը նվազեցին, թեև ավելի դանդաղ, շարունակելով վերաարտահանման փուլային դադարեցման միտումը (պատկեր 4): Արտահանման ծավալները մայիսին 39.3 տոկոսով (տ/տ) կրճատվեցին, ինչը պակաս էր ապրիլի 56.6 տոկոսով (տ/տ) անկումից: Ներմուծման ծավալները ևս նվազեցին 20.4 տոկոսով (տ/տ)՝ հետևելով ապրիլի 41.1 տոկոսով (տ/տ) անկմանը: Նշվածն արտացոլում էր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի վերաարտահանմամբ առևտրի թուլացումը: Մայիսին թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտահանումը նվազեց 69.2 տոկոսով (տ/տ) և ընդհանուր արտահանման ցուցանիշի իջնելու առաջնային պատճառն էր: Տրանսպորտային միջոցների արտահանումը նույնպես նվազեց (70.7 տոկոս, տ/տ): Ավանդական արտահանման կառուցվածքում պատրաստի սննդամթերքը (աճը 21 տոկոս, տ/տ), տեքստիլը (աճը 55.2 տոկոս, տ/տ) և հանքանյութերը (աճը 14.2 տոկոս, տ/տ) գլխավոր ապրանքատեսակներն էին, որոնք նպաստեցին արտահանման նշանակալի անկման աննշան չեզոքացմանը: Ներմուծվող ապրանքների կազմում թանկարժեք մետաղների 61.4 տոկոսով (տ/տ) նվազումը մասամբ փոխհատուցվեց գյուղատնտեսական մթերքի (աճը 54 տոկոս, տ/տ), յուղերի (աճը 37 տոկոս, տ/տ) և պատրաստի սննդամթերքի (աճը 35 տոկոս) աճի հաշվին: Առանց թանկարժեք մետաղների և քարերի վերաարտահանմամբ առևտրի՝ արտահանումն ու ներմուծումը աճեցին համապատասխանաբար 9.2 տոկոսով (տ/տ) և 14.3 տոկոսով (տ/տ): Աճողական

կտրվածքով՝ հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում արտահանումն ու ներմուծումը նվազեցին համապատասխանաբար 57.4 տոկոսով (տ/տ) և 42 տոկոսով (տ/տ), ընդ որում առևտրային դեֆիցիտը ընդլայնվեց 39.8 տոկոսով (տ/տ) մինչև ՀՆԱ-ի 7 տոկոսը՝ բարձրանալով 2024 թվականի ՀՆԱ-ի 5 տոկոսից: Հունիսին համախառն միջազգային պահուստներն աճեցին 145 միլիոն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 4 միլիարդ ԱՄՆ դոլար, որը համարժեք է 3.1 ամսվա ներմուծման ծածկույթի:

Հունիսին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ փոքր-ինչ արժեզրկվեց՝ մնալով ավելի ուժեղ, քան 2024 թվականի հունիսին: ՀՀ դրամն արժեզրկվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ 0.1 տոկոսով (ա/ա՝ տվյալ ամիսը նախորդ ամսվա նկատմամբ) և եվրոյի նկատմամբ 3.7 տոկոսով (ա/ա): Սակայն 2025 թվականի սկզբից ի վեր դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել էր 3 տոկոսով:

Մայիսին առևտրային բանկերի ավանդները և վարկերը աճեցին համապատասխանաբար 1 տոկոսով (ա/ա) և 1.3 տոկոսով (ա/ա): Մայիսին ավանդների և վարկերի աճը պայմանավորված էր ՀՀ դրամային միջոցների աճով: Վարկերի աճը հիմնականում պայմանավորված էր սպառողական վարկերի ընդլայնմամբ: Ընդհանուր ավանդների փոխարժեքով ճշտված տարեկան աճը 13.6 տոկոս էր (տ/տ), վարկերի աճը՝ 27.9 տոկոս (տ/տ) (պատկեր 5):



Մայիսին բյուջեում գրանցվեց ՀՆԱ-ի 0.8 տոկոսի չափով պակասուրդ: Հարկային եկամուտները (այդ թվում՝ հիփոթեքի հետ կապված եկամտային հարկը) անվանական արտահայտությամբ աճեցին 14.1 տոկոսով (տ/տ)՝ հիմնականում պայմանավորված հավաքված ԱԱՀ-ի ավելացումով (աճը 17.9 տոկոս, տ/տ): Զգալի աճեց նաև շրջանառության հարկի հավաքագրումը (աճը 72.5 տոկոս, տ/տ)՝ պայմանավորված շրջանառության հարկման ռեժիմների դրույքաչափի բարձրացմամբ: Ընդհանուր ծախսերն աճեցին 28.2 տոկոսով (տ/տ), ինչը հիմնականում կապիտալ ծախսերի աճի՝ հաշվին էր, որոնք գրեթե եռապատկվեցին (տ/տ)՝ պայմանավորված պաշտպանական ծախսերի 3.5-ապատիկ (տ/տ) աճով: Ընթացիկ ծախսերի ավելացումը համեստ էր՝ 3 տոկոս (տ/տ), ընդ որում ամենաբարձր աճը սոցիալական նպաստների և կենսաթոշակների մասով էր (աճը 12.8 տոկոս, տ/տ): Մայիսին գրանցված պակասուրդը հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածի պակասուրդի աճողական ցուցանիշը հասցրեց ՀՆԱ-ի 0.2 տոկոսին:

Պատկեր 1. 2025 թ. մայիսին տնտեսական ակտիվությունն աճեց մինչև 10.4 տոկոս (տ/տ)

Պատկեր 2. Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումների երկնիշ աճը շարունակվեց

(Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշ, տ/տ փոփոխություն, %)

(Հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 3. Տարեկան գնաճը մեղմացավ՝ 2025 թ. հունիսին կազմելով 3.9 տոկոս

Պատկեր 4. Թանկարժեք քարերի վերաարտահանումը 2025 թ. մայիսին նվազեց

(ՄԳԻ գնաճ, տ/տ փոփոխություն, %)

(Միլիարդ ԱՄՆ դոլար)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Պատկեր 5. Բանկային ավանդների և վարկերի երկնիշ աճը պահպանվեց


(%, տ/տ, փոխարժեքով ճշտված)



Աղբյուր՝ ՀՀ ՎԲ

Պատկեր 6. 2025 թ, հունվար-մայիս ամիսներին բյուջեում աննշան պակասուրդ գրանցվեց

(Միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուր՝ Ֆինանսների նախարարություն